



ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ  
ԴԱՎՐԻԺԵՅԻՈՅ» ԳՐՔԻՑ, ԱՇԽԱՐՀԱԲԱՐ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՄ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԵՐ  
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱԶԸ ԵՎ  
ԷԶՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՔԱՐԵՐԸ  
ԱՍՊԱՀԱՆ ՏԱՐԱՆ.

Պարսից մեծ թագավոր Ծահ-Աքաս առաջինը մեր հայ ժողովրդին աքսորեց իր բնիկ Հայոց աշխարհից և քեց Պարսկաստան այն դիտավորությամբ, որ այերվի Հայոց աշխարհը, և շենանա Պարսկաստանը, [որ] նվագի հայ ժողովուրդը, և բագմանա պարսիկ ժողովուրդը: Եվ որովհետև ինքը՝ Ծահ-Աքասը, գգուշավոր մարդ էր, մշտապես խորհում և մտածում էր, թե ինչպիսի՛ հնարներ գտնի հայ ժողովրդի համար, որ չվերադառնան իրենց երկիրը, այլ մնան Պարսկաստանում: Քանի որ հայ [գաղթականն] էրից նրանք, որ ծնվել էին Հայոց աշխարհում, բուն կերպով ուզում էին գնալ Հայոց երկիրը, դրա համար մի-նար գտնելու նպատակով Ծահ-Աքասը, իր վեհ փառքից խոնարհ կերպով ցած իջնելով, գրուցում էր հայերի հետ՝ ում էլ պատահեր: Եվ շատ անգամ [որպես] պատասխան լսել էր, թե Հայոց աշխարհում բարիքների լիություն և առատություն է և էժանություն, իսկ այստեղ քիչ է և թանկ. և այնտեղ՝ նրանց հայրերի ու

նախահայրերի գերեզմանատները և վանքեր ու ուխտատեղիներ, որ կան սրբերի դամբարաններ, և մանավանդ՝ մեծահանդես սուրբ Աթոռ Էջմիածինը, որ գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ Աջը, որով օրհնվում է սուրբ մեռուներ [և] որտեղից գնալով սփռվում է հայ ժողովրդի մեջ ամբողջ աշխարհում՝ որ էլ լինեն. դրա համար ամբողջ հայ ժողովուրդը հնազանդվում է Էջմիածնի սուրբ Աթոռին և այնտեղ նստող իր կաթողիկոսին: Եվ այս բաները ոչ թե տգետներ և աննշան մարդիկ են միայն ասել, այլ նաև նշանավոր [մարդիկ] և գիտուններ: Լսել ենք նաև ոմանցից, թե այս էլ են ասել՝ եթե շահն ուզում է, որ հայ ժողովուրդը Պարսից աշխարհում հաստատուն մնա, նա սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը պետք է բերի Ապպահան և այնտեղ կառուցի նոր Էջմիածին, որպեսզի մեռն օրհնել լինի, և այնտեղ նստի կաթողիկոսը, և ապա [միայն] հայ ժողովուրդը կհաստատուվի, կմնա, որովհետև ամբողջ հայ ժողովուրդը Աջին և Էջմիածնին է կապված:

Արդ, դարանակալած և խորամանկ օձը, կյանքի, հոգիների, քրիստոնեական հավատի թշնամին, որ հայ ժողովրդի մասին մշտապես տարակուսանքի մեջ էր, նրանցից

լսեց տարակուսանքի ստույգ լուծումը: Անուհետև հաստատուապես և անփոփոխելի կերպով մտադրվեց քանդել սուրբ Էջմիածինը և խափանել այնտեղի կաթողիկոսությունը, Լուսավորչի Աջը և Էջմիածնի քարերը բերել Ասպահան և այնտեղ կառուցել նոր Էջմիածին, որ այնտեղ նստի կաթողիկոսը, և այնտեղից սփովի մեռունն ամբողջ աշխարհում, որպեսզի այդ ձևով հայ ժողովուրդը Պարսկաստանում մնա, այլև՝ բոլոր երկրների շահն ու եկամուտը հավաքվի իր քաղաքում և իր ժողովրդի մեջ: Դրա համար Ասպահան քաղաքի մեջ տեղ նշանակելով ստանձնացրեց, ուր Էջմիածին էր ուզում կառուցել. և այն տեղը մոտ էր այն այգուն, որ պարսկերեն **Քաղիզրիչկ** են կոչում, [գրտնըվում էր] այս այգու արևմտյան կողմում, նրա ետևի կողմից նրան կից:

ՏԵՐ ՄՈՎՍԵՍԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՎԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Ապա Մովսես վարդապետը, դուրս գալով Ֆահրապատից մեծ փառքով և անպատում ցնծությամբ ոչ միայն իր, այլ և բոլոր քրիստոնյաների համար, եկավ-հասավ Երևան քաղաքը, սուրբ Էջմիածին և ստանց հապաղելու սուրբ Աթոռի նորոգության գործին ձեռնարկեց մեր թվականության 1076 (1627) թվին. Վարդավաթի պահքի երկուշաբթի օրը շինարարությունն ու նորոգությունը սկսեցին:

Արդ, լսել էս նորոգության մասին, բաց չգիտես, թե ինչպես էր ավերվածությունը. դրա համար էլ ստիպված եմ գրել ավերվածության մասին, որպեսզի իմանան սուրբ Աթոռի թշվառության մասին, որով և [այն] ցավն ու կսկիծը, որ ունեին ամբողջ հայ ժողովուրդը և ժամանակի վարդապետները սուրբ Աթոռի մասին. այլև Մովսես վարդապետի և իր աշակերտների աշխատանքների և սուրբ Աթոռի նորոգման համար քրիստոնյաների [արած] նվիրատվությունների և տված ողորմությունների մասին:

Ինչպես Դավիթ մարգարեն է ասում, թե՛ Երուսաղեմը դարձրին ինչպես մրգապահների հյուղակներ, և Եսայի մարգարեն Սիոնի մասին ասում է, թե՛ նման է սելի սպու մեջ եղած հովանուն, նույն այս կերպով կարելի էր ասել և աստվածաբնակ սուրբ Աթոռի մասին, որովհետև ամբողջովին պարզված էր ունեցվածքից և կողոպտված գարդերից. գիրք իսկ չկար, որովհետև այնտեղ ժամասացություն և ընթերցում չէր լինում, զգեստ և շորջատ չկար, որովհետև ժամերգություն և պատարագ չէր արվում. մինչև

իսկ Քրիստոսի իջման տեղը և սուրբ սեղանը ծածկոց չունեին. չկային կանթեղներ, որովհետև լույս չկար, այլ միշտ խավարի մեջ. միայն մի ոմն օտարական մահմեդական անցնող ճանապարհորդների համար ձեթի նրագ էր վառում և դնում բեմի վրա, այն էլ՝ երբեմն-երբեմն, որպեսզի այն տեսնելով իրեն ողորմություն տան: Խնկարկություն չէր արվում, որովհետև խունկ և բուրվատ չկար: Եկեղեցու սալահատակը քարուքանդ եղած՝ գեոունների և սողունների որջ էր դարձել: Նրա մեծամեծ լուսամուտներն առանց վանդակի էին, որտեղից թռչունները ներս մտնելով՝ եկեղեցին լցնում էին ձետով, շուրեքով և այլ սպակախություններով, որ ամեն օր ստիպյալ մաքրում էինք: Եվ առավոտյան այգաբացին թռչունների ձայնը ժամերգության ձայնը խանգարում էր: Իսկ դրսի կողմից կաթողիկեի գլուխը, ամբողջ տանիքը և պատերի երեսները քանդողոված էին, և քարերը՝ թափված, իսկ պատերի հատակաքարերը՝ փշրված և ծակոտված: Եվ վաղեմի ժամանակներից եկեղեցու շուրջը աղբակույտն ու հողը յոթը կանգուն քարձրացել էին և եկել-ծածկել էին հիմքերը և եկեղեցու դրսի կողմում գտնվող աստիճանները:

Իսկ զարդեր, սպասեղեն և անոթներ եկեղեցին և կամ վանքը չունեին, որովհետև հին ժամանակներից ինչ էլ որ եղել էր, կաթողիկոսները բոլորը վաճառելով և գրավ դնելով վատնել էին, որոնց մեջ էր մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակես հայրապետի Աջը, այլև Աղջոց վանքի սուրբ Ստեփաննոսի Աջը, դրանց հետ նաև խաչ, սկիհ, բուրվատ, շուրջատ և էլի ուրիշ բաներ, որ ազատեց Մովսես Վարդապետը:

Եվ երբ Մովսես վարդապետն սկսեց նորոգությունը, շուրջանակի բլրացած հողի և մոխրի համար տարակուսում էին, թե ինչպե՛ս պետք է փորվի-հանվի, բաց որովհետե՛վ աստվածային կամքը քարեհան էր և ձեռնարկված գործը Նրան հանելի էր, հողի վերացումը դյուրահնար եղավ, որովհետև հողը և վարարած գետի ջուրը բերեցին-կապեցին հողի կողմը և շատ մշակների գործի դրեցին, և մշակներն սկսեցին փորել հողը և տորթել ջրի մեջ. և այսպես անելով՝ ջուրն առավ-տարավ հողը, և քարը մնաց: Երբ քիչ օրերի ընթացքում բոլոր կողմերից հողը շուտով վերացավ, ամբողջ տեղը բացվեց, և գետինը հարթվեց, և մնացած քարերը շարվեցին կառույցի պատերին: Եվ այսպե՛ս գործի ձեռնարկելով շուրջանակի լայն ու ընդարձակ պարիսպ քաշեցին՝ նրա մեջ կառուցելով ութ բուրգեր: Եվ այսպե՛ս պարսպից ներս, արևմտյան կողմում, շինեցին դարպասներ և տներ՝ իրենց և հյուրերի պետքերի համար:

Եվ օրեցօր նորոգվում, հաստատվում էր սուրբ Աթոռը, որով քրիստոնեական հավատի ամբողջ կարգ ու կանոնը, որովհետև սուրբ Աթոռի նորոգման համբավը հռչակվեց ու տարածվեց ամբողջ աշխարհում՝ Հունաստանում, Պարսկաստանում, Քրդաստանում, Վրաստանում: Եվ բոլորն էլ ուրախանալով ցնծում էին: Մովսես վարդապետն իր աշակերտներից ուղարկում էր քարոզության համար բոլոր կողմերը, որոնք գնալով՝ հոգեբուխ քարոզությանը և բարեկրոն վարքով հաստատում էին Քրիստոսի հավատի և եկեղեցական ավանդության կարգ ու կանոնը, որովհետև ուր էլ որ գնում էին, իրենց վարդապետի նմանողությամբ ճշմարիտ գործեր էին ցույց տալիս. եկեղեցիներ էին կառուցում, քահանաներ էին կարգում և կործանում էին ճշմարտության հակառակորդներին. ահա ինչու ճշմարտությունը գորանալով առաջ էր գնում:

Տեր Մովսես հոգեվից սուրբ վարդապետը Հոհանավանքի մեծափառ սուրբ ուխտատեղիում դպրատուն հաստատեց, որ հավաքեց շատ երեխաներ և բոլորի ծախսերն ու պետքերը ինքն էր հոգում. և երեխաները խելամտորեն և անխափան եկեղեցական ուսում էին ստանում և Աստվածաշնչին ու իմաստասիրական գրքերին ծանոթանում: Նրանք բոլորն էլ դարձան երկրին պիտանի և օգտակար մարդիկ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, արեղաներ, քահանաներ: Եվ ամաչացած, խավարի մեջ գտնվող բոլոր վանքերը լցվեցին միաբաններով, արեղաներով և կրոնավորներով, իսկ գյուղերը՝ փորձառու քահանաներով: Դրա համար մեր երկրի բոլոր կողմերում բնակվող ամբողջ հայ ժողովուրդը նախորդ կաթողիկոսների անկարգությունից ձանձրացած և սրա բարեկարգությունից միխթարված՝ սիրով ու հոծարությունքով, կաթոգին սրտով ուզում էին, որ ինքք՝ մեր հայր սուրբը, Մովսես վարդապետը, լինի կաթողիկոս: Վարդապետներ և եպիսկոպոսներ և երևելի մարդիկ գրավոր և աղաչանքներով թախանձում էին բոլոր կողմերից, որ նա հանձն առնի կաթողիկոսական աստիճանը, բայց նա հրաժարվում էր՝ իրեն անարժան գտնելով առաքելական աստիճանին:

ԱՆՎԱՆԻ ՎԱՆՔԵՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԵՎ  
 ԲԱԶՄԱԾԱԽԻ ՈՒ ՄԵԾԱՎԱՅԵԼՈՒԶ  
 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԾԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Ինչպես գարնան ժամանակ հարավի հողմը փչելով բեղմնավորում է երկիրը և առաջ բերում բազմազան ծաղիկների տեսակներ, որոնցով գունազարդվելով վալելույ է դառնում երկրի երեսը, նույն այս ձևով էր և այս

երկու կաթողիկոսների՝ Մովսեսի և Փիլիպպոսի ժամանակներում, որովհետև բազմաթիվ վանքեր, անապատներ և եկեղեցիներ կառուցվեցին, որոնցից մեկն է և սուրբ Ստեփաննոս Նախավկայի մեծ և անվանի վանքը, որ գտնվում է Դարաշամքի ձորում:

Այսպես և Եսայի վարդապետը Փիլիպպոս կաթողիկոսի օրոք սկսեց նորոգել սուրբ Կարապետի վանքը... Հին եկեղեցու տեղը չորս սյուների վրա սրբատաշ քարերով, բարձրաբերձ կամարներով և կաթողիկոսով լայն և ընդարձակ եկեղեցի կառուցեց: Ամբողջ եկեղեցին, նրա հիմքերից մինչև ծայրը, և բոլոր շինությունները շատ աշխատանքով և բազում ծախսերով կատարվեցին, և 1102/1653 թվի հոկտեմբեր ամսի 17-ին օրհնվեց եկեղեցին մեծահանդես հավակասիքով (օծմամբ)՝ ի փառս Աստուծո:

Այսպես և Զաքարիա վարդապետը Փիլիպպոսի օրով ձեռնարկեց նորոգելու Հոհանավանքի եկեղեցիներն ու կառույցները... և Զաքարիա վարդապետը հավաքեց բազմաթիվ վարպետներ՝ քարհատ, ատաղձագործ, դարբին, և սկսեց նորոգել վանքը. նախ բոլոր տներն ու խուցերը կառուցեց-ավարտեց և ապա եկեղեցիները, բայց շուտափույթ, որովհետև եկեղեցիների նորոգումը երկու տարում ավարտվեց, քանի որ երկրի մեջ (հողի վրա) առատորեն հարստություններ թափեց, որ տալիս էր աշխատողներին: Եվ 1101 (1652) թվին աշխատանքն ավարտեցին և Խաչվերացի տոնին օրհնեցին այն խաչը, որ կաթողիկեի գլխին էր, ու գոհացան Աստուծոց:

Այն ժամանակներում, Փիլիպպոս կաթողիկոսի օրոք, վերստին կառուցվեց և սուրբ Թադեոս առաքյալի վանքը, որ գտնվում է Արտազ գավառի Մակու գյուղում... և տանարի աշխատանքներն ավարտվեցին 1099 (1650) թվին: Տանարն ավարտելուց հետո Աստուծո հանդեպ [ունեցած] նույն հույսով սկսեցին ժամատունը շինել տաշված քարերով և կրով կայցներով: Եվ սա ավարտվեց 1102 (1653) թվին: Դրանից հետո կառուցեցին սուրբ կույս Սանդուխտի վկայաբանը և ապա Նահատակ կոչվող եկեղեցին, որ սուրբ Թադեոս առաքյալի նահատակության տեղն է:

Սրանց նման՝ Տեր Փիլիպպոս կաթողիկոսի օրոք կառուցվեց սուրբ Գևորգ գորավարի վանքը, որ գտնվում է Մուղնի գյուղում... Այսպես և՛ Ոսկան վարդապետի ձեռքով նորոգվեց մեր մեծ վարդապետ սուրբ Մեսրոպի կառուցած սուրբ Սարգիս գորավարի վանքը, որ է Ուշի գյուղում, Արագած լեռան ստորոտին գտնվող Կարիի գյուղի մոտ: Այլև՝ Աստուծո փառքի հույակապ, բայցանխատ և բարձրաբերձ տանարը՝ մեծ վարդապետ

սուրբ Մեսրոպի հանգստարանը, նրա, որ գտավ հալոց գրերը. ինչպես որ նրա մասին եղած պատմությունն ասում է, թե նրան տարան-թաղեցին Օշական կոչվող գյուղում: Արդ, սուրբ Մեսրոպ վարդապետի հանգրստարանի այս տաճարի ամբողջ տանիքը վաղ ժամանակներից փլվել-իջել էր, և միայն ավագ խորանն էր մնացել ծածկված: Փիլիպպոս սուրբ հայրապետն իր կաթողիկոսության ժամանակ սկսեց այս ևս նորոգել, որը և կատարեց բազում ծախսերով և աշխատանքներով՝ տաշված քարով և կրով կայցնելով, մինչև որ ամբողջն ավարտվեց մեր 1094 (1645) թվին՝ ի փառս Աստուծո:

Այլև՝ Տեր Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով նորոգվեց բարձրաբերձ և լայնահատ ու մեծաշուք այն տաճարը, որ սուրբ Աստվածածնի անունով հնում, վաղ ժամանակներում կառուցվել է Բջնի գյուղում:

Կան նաև ուրիշ շատ նորոգված վանքեր, հիմքից նոր կառուցված բազմաթիվ եկեղեցիներ Տփխիս քաղաքում, Լոռվա գավառում և Արարատյան երկրում, Սիսական գավառում և Ղարաբաղի երկրում, Նախշվան քաղաքում և նրա գյուղերում, ինչպես նաև Աստապատի չքնաղ, մեծաշուք և վայելուչ եկեղեցին, այլև Նախշվան քաղաքի, Մահկ գյուղի, Շահկերտ գյուղի և Գաղ գյուղի [եկեղեցիները], որոնք կառուցվեցին Տեր Հակոբ կաթողիկոսի օրոք. և Շոտոթի եկեղեցին, Ագուլիսի վանքն ու գյուղի 4 եկեղեցիները. Թավրիզ քաղաքի եկեղեցին և Դարաշամբի եկեղեցին, Տիկո եկեղեցին: Սրանք և ուրիշ շատեր, որ չեմ հիշում, մի քանիսը Մովսես կաթողիկոսի օրոք շինվեցին և մի քանիսը՝ Փիլիպպոս կաթողիկոսի: Դրանք Տեր Աստված անասան պահի մինչև հավիտյան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փա՛ռք ամենասուրբ Երրորդության՝ Հոր և Որդվո և Հոգվույն սրբո. ամեն:

Մեր Տեր Յիսուս Քրիստոսի շնորհներով և ողորմությամբ հալոց մեր մեծ 1115 (1666) թվականին Երևան մայրաքաղաքում, Կաթողիկե կոչվող սուրբ եկեղեցում գրվեց այս գիրքը, որ կոչվում է պատմագիրք՝ հոգացողությանը, ծախսով ու միջոցներով Առաքել վարդապետի, որ օրինակը բազմացնելու համար գրել տվեց այս գիրքը: Եվ սա հինգերորդ գիրքն է, որ Առաքել վարդապետի ձեռագիր օրինակից ընդօրինակվեց: Նա շատ ջանքերով, բազում հոգացողությամբ ծախսեր է անում և գրիչների ձեռքով գրել տալիս [հետևյալ նպատակներով]. ա) օրինակը բազմացնելու համար, բ) Տիրոջ մոտ հիշատակի համար: Արդ, ովքեր հանդիպեք սրան կարդալով կամ ընդօրինակելով, կամ շրջելով (թերթելով) բարեխղճությամբ հիշեցեք ի Քրիստոս վերոհիշյալ Առաքել վարդապետին, որը զանազան և տեսակ-տեսակ բազում դժվարություններ կրեց այս պատմագրքի համար և տակալին նույն դժվարությունների մեջ է: Դրա համար աղաչում ենք ի Տեր հիշել իրեն՝ յուրայիններով և բոլոր նրանց, որոնք աշխատանք ունեն սույն գործի մեջ: Մաղթում են, որ հիշեք ի Քրիստոս սրանց հետ և ինձ՝ Ավետիս երեց նվաստ գրչիս, որ ընդհանուրի օգտի համար Առաքել վարդապետի հրամանով գրեցի այս գիրքը: Արդ, ովքեր որ հիշեք մեզ ի Քրիստոս.... մեկի դիմաց հազարապատիկ ստանաք մեր օրհնյալ Աստուծոց՝ Քրիստոսից, հավիտյան. ամեն:

Գրաբար բնագրից թարգմանեց՝  
ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ

(Հոգևոր անմարանի գրաբարի դասախոս, դոցենտ)

